

# ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА



## ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ \*

ՅՏԴ 81՝37

DOI: 10.52063/25792652-2023.1.16-79

### ԱՆՆԱ ՂԱՐՍԼՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի  
լեզուների ամբիոնի դասախոս,  
բանասիրական գիտությունների թեկնածու,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[annagharslyan@gmail.com](mailto:annagharslyan@gmail.com)  
ORCID: 0000-0003-4053-3736

Հոդվածի նպատակն է ներկայացնել արդի հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգի իմաստային դրսևորումները, որոնց իմացությունը մասնագիտական ճշգրիտ խոսք կառուցելու լավագույն գրավականներից է:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ կատարել տնտեսագիտական տերմինների իմաստային դասակարգում, ուսումնասիրել բազմիմաստ տերմիններն իրենց երկու տեսակներով՝ արտահամակարգային և ներհամակարգային, տարբերակել հարանուն տերմինները, հստակեցնել տերմինային հոմանիշության և հականիշության դեպքերը:

Թեման արդիական է և ունի լեզվաբանական ուսումնասիրության անհրաժեշտություն, քանի որ վերջին տասնամյակներին հասարակության տարբեր ոլորտներում նկատելի է տնտեսագիտական բառապաշարի, մասնավորապես՝ ընդհանուր տերմինների հաճախակի գործածություն:

Հոդվածում իմաստաբանական քննության ենք ենթարկել արդի հայերենի մոտ 170 տնտեսագիտական տերմին, ներկայացրել դրանց ձևաիմաստային դրսևորումները, դերն ու ազդեցությունը մասնագիտական խոսքում, ծագած խնդիրներն ու արժանահավատ լուծումները:

Հոդվածի կյուրը ներկայացված է լեզվաբանության մեջ մշակված իմաստաբանական, համեմատական, վերլուծական և նկարագրական մեթոդներով:

Կատարված ուսումնասիրությունը փաստում է, որ տնտեսագիտական բառապաշարում մեծ թիվ են կազմում բազմիմաստ տերմինները, որոնք հաճախ են մասնագիտական տեքստերի տարընթերցումների և տերմինների իմաստային շփոթությունների պատճառ դառնում: Երևույթի առկայությունը պայմանավորված է մասնագիտական և ոչ մասնագիտական անորակ աղբյուրների լայն տարածմամբ, մասնավորապես՝ տերմինների իմաստների տարաբնույթ սահմանմամբ: Տերմինագիտության մեջ խոչընդոտ հանդիսացող այս երևույթներն առնվազն կրճատելու համար անհրաժեշտ է տվյալ

\* Հոդվածը ներկայացվել է 20.02.2023թ., գրախոսվել՝ 07.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

**գիտակարգի բառապաշարն ուսումնասիրելիս համապատասխան մասնագետների համագործակցություն:**

**Հիմնաբառեր՝** *իմաստաբանություն, տերմինային բառեր, զուտ տնտեսագիտական տերմիններ, տերմինային բազմիմաստություն, տերմինային հոմանիշություն, բառակազմական տարբերակներ, փոխառություններ, հականիշ զույգեր, հարանուն տերմիններ:*

**Նախաբան**

Ցանկացած գիտակարգի զարգացման յուրաքանչյուր դրսևորման առաջին արձագանքողը լեզվաբանությունն է իր հաղորդակցման և ճանաչողական ուղղություններով: Ամեն մի փոփոխություն, նորություն, նոր ծնվող հասկացություն ստանում է լեզվական բնորոշում ինչպես լեզվական նորմերի պահպանմամբ, այնպես էլ դրանց բացակայությամբ կամ խախտմամբ:

Տնտեսագիտությունը, լինելով հասարակական գիտություն, ունի անընդմեջ համալրվող տարասեռ բառապաշար՝ պայմանավորված իր և հարակից գիտությունների փոխհարաբերությունների, մասնագիտական ոլորտների և ենթաօլորտների ակտիվ զարգացմամբ: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել արդի հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգի իմաստային դրսևորումները՝ մենիմաստություն, տերմինային բազմիմաստություն, հոմանիշություն, հարանունություն և այլն, որոնց գիտական հիմնավորումները խիստ անհրաժեշտ և արդիական են, քանի որ վերջին տասնամյակներին հասարակության տարբեր շերտերում նկատելի է տնտեսագիտական բառապաշարի, մասնավորապես՝ ընդհանուր տերմինների հաճախակի գործածություն: Սա պայմանավորված է տնտեսական և հասարակական հարաբերությունների ակտիվ զարգացմամբ: Ուստի մասնագիտական բառերի ուսումնասիրությունը իմաստաբանական տեսանկյունից կարող է լինել հասարակության՝ տնտեսագիտական գիտակցության մակարդակի բարձրացման օժանդակ միջոց:

**Վերլուծություն և արդյունքներ**

Լինելով հասարակական գիտություն՝ տնտեսագիտությունը բազմաօլորտ է և բազմաճյուղ, հետևաբար տնտեսական գիտությունների համակարգն ուսումնասիրվում է որոշակի մեթոդաբանությամբ և բաժանվում հետևյալ խմբերի.

1. տեսական մեթոդաբանական,
2. ճյուղային (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, կապիտալ, շինարարություն, տրանսպորտ և այլն),
3. ֆունկցիոնալ (ֆինանսներ, հաշվապահական հաշվառում, մարքեթինգ և այլն),
4. խառը (բնօգտագործման տնտեսագիտություն, ժողովրդագրություն, աշխատանքի տնտեսագիտություն, տնտեսական աշխարհագրություն և այլն) (Կիրակոսյան և ուրիշներ, *Տնտեսագիտության տեսություն* 34-35):

Ակներև է, որ տնտեսագիտական տերմինները բազմաբովանդակ բառեր և կայուն կապակցություններ են, որոնք ունեն գործածության **ընդհանրական և նեղ** մասնագիտական դաշտ:

Նեղ մասնագիտական տերմինները գլխավորապես սպասարկում են տնտեսագիտության առանձին ոլորտներ և ենթաօլորտներ, ինչպես՝ *լորո, լիֆո, նովացիա՝* ֆինանսական, *այրնժ, աժուր, անտիսիպացիա՝* բանկային, *հաշվեստուգում, ապրանքագիր, աուդիտոր՝* հաշվապահական, *ագրոքիմիա,*

*կենսավառելանյութ, ինքրիդինգ՝* գյուղատնտեսական և այլն<sup>1</sup>: Սույն երևույթը տնտեսագիտական բառարաններում արտահայտվում է տվյալ տերմինի բառահոդվածում մասնագիտական այս կամ այն ոլորտի, ենթաօլորտի (ֆինանսական, տնտեսագիտական, առևտրային, բանկային, հաշվապահական և այլն) նշումով: Օրինակ՝

**Սվիֆտ–(բանկ.)** միջբանկային հեռահաղորդակցությունների և համակարգչային ծառայությունների հետ կապված միջազգային դրամական հաշվարկներ և վճարումներ կատարելու ավտոմատացված համակարգ,

**դիվիդենտ–(ֆին.)** ֆիրմայի, բաժնետիրական ընկերության, ձեռնարկության շահույթի մաս, որը նախատեսված է բաշխվելու բաժնետերերի միջև,

**ակվիզիցիա – (առևտր.)** տրանսպորտային ձեռնարկության կամ ապահովագրական ընկերության կողմից նոր բեռների կամ ապահովագրումների ներգրավում և այլն:

Տնտեսագիտության բոլոր ոլորտներում կիրառվող մասնագիտական բառերը տարբերակվում են որպես **տնտեսագիտական ընդհանուր տերմիններ**, օրինակ՝ *եկամուտ, զարգացում, արտադրություն, աշխատուժ, ցուցանիշ, տնտեսություն, արժեք, սեփականություն, սպառում, աճ* և այլն:

Տնտեսագիտական տերմիններն իրենց արտահայտած նշանակությամբ և գործածությամբ տարասեռ են: Տերմինների գիտական լիարժեք ուսումնասիրության հիմքում ընկած է ճիշտ խմբավորումը: Հիմք ընդունելով լեզվաբան Էդուարդ Ադայանի՝ տերմինների դասակարգումը (Ադայան 320-321)՝ առանձնացրել ենք տնտեսագիտական բառերի 2 մեծ խումբ՝

**1. տերմինային բառեր**, «որոնք սովորական կամ ընդհանուր գործածությամբ ու նշանակությամբ բառ են, բայց տերմինաբանորեն մասնավորված գործածությամբ ու նշանակությամբ՝ տերմին» (Ադայան 320), օրինակ՝ **գին, գումար, վճար, ապրանք, արժեք, ծախս, շուկա** և այլն:

**2. տերմիններ**, որոնք ունեն միայն տերմինաբանական նշանակություն: Սրանք բաժանվում են 2 խմբի:

**ա) զուտ տնտեսագիտական տերմիններ**, որոնք անվանում են միայն տնտեսությանը վերաբերող հասկացություններ, ինչպես՝ *արժեթղթերի շուկա, աճուրդասակարկում, բոնդ, ռեսուրսային անեծք, նոստրո հաշիվ, լիզինգ, սփոթ, ռեպո, ցեդենտ* և այլն:

**բ) տերմիններ**, որոնք ունեն 2 կամ ավելի տերմինային նշանակություն և գործածվում են առանձին տերմինահամակարգերում: Օրինակ՝

**կարտել – 1. (աշխգր.)** մոնոպոլիստական միավորման ձև, **2. (տնտես.)** խոշոր ձեռնարկությունների միավորման տեսակ, որի նպատակն է իրենց միջև մրցակցության սահմանափակումը,

**ավիզո–1. (ռազմ.)** ռազմական նավատորմի հետախուզական նավ, **2. (բանկ.)** պաշտոնական գրավոր տեղեկացում բանկային և առևտրային պրակտիկայում հաշվարկային գործառնությունների կատարման վերաբերյալ,

**պարիտետ–1. (իրավբ.)** հավասարություն, հավասարիրավություն, **2. (տնտես.)** տարբեր երկրների դրամական միավորների փոխհարաբերությունը ոսկով,

Երկրորդ տեսակի տերմինները խախտում են տերմինային մենիմաստության սկզբունքը: Սույն երևույթը տերմինաբանության մեջ կոչվում է **տերմինային բազմիմաստություն**, երբ տերմինն ունի մասնագիտական տարբեր նշանակություններ, որոնք, ըստ էության, նույն հասկացությունն են արտահայտում՝ համապատասխանեցնելով տվյալ գիտակարգի ուսումնասիրման առարկային:

<sup>1</sup> Գյուղատնտեսական տերմինները տե՛ս Կարապետյան, Ռազմիկ և Ռազմիկ Արզոյան. *Ռուս-հայերեն գյուղատնտեսական տերմինների բացատրական համառոտ բառարան*. ՀԳԱ, Երևան, 2002:

**Տերմինային բազմիմաստություն:** Տևտեսագիտական բառապաշարում բավականին մեծ թիվ կազմող բազմիմաստ տերմինները քննել ենք՝ հաշվի առնելով տերմինային բազմիմաստության **արտահամակարգային** և **ներհամակարգային տեսակները** (Աղայան 349):

**Արտահամակարգային է այն բազմիմաստությունը,** երբ միևնույն տերմինի արտահայտած տերմինային տարբեր նշանակություններից յուրաքանչյուրը պատկանում է առանձին տերմինահամակարգերի: Որքան հեռու են տերմինահամակարգերը, այնքան պակասում է բազմիմաստ տերմինները շփոթելու հավանականությունը, այսպես՝

**ռեմիսիա – 1. (ֆին.):** *Վճարման գումարի կլորացումը դեպի ստորին սիշը: 2. (բժշկ.):* *Հիվանդության ժամանակավոր թուլացում՝ նահանջ<sup>1</sup>,*

**մուլտիպլիկատոր – 1. (կինո.):** *Մուլտիպլիկացիոն կինոնկարներ ստեղծող: 2. (ֆիզ.):* *Նկարների բազմապատկիչ սարք, բազմալուսանկարիչ ապարատ, բազմարկիչ: 4. (տնտեսգ.):* *Բազմապատկիչ՝ տնտեսական ցուցիչ, որով բնութագրվում է տնտեսության աճը՝ կապված ներդրումների ծավալների հետ,*

**օպցիոն – 1. (իրավք.):** *Համաձայնագրի պայմանադիր կողմերից մեկի՝ մյուսին տրամադրված պայմանների ազատ ընտրության իրավունք: 2. (առևտր.):* *Սահմանափակ պատասխանատվությամբ բորսայական գործառնությունների հատուկ տեսակ:*

Նույնպիսի տերմիններ են՝ **արժույթ, դեպրեսիա, լուծարում, ռեպատրիացիա, նոտիֆիկացիա, ինդեքս, ակրեդիտիվ, Էմբարգո, դեպոզիտ** և այլն, որոնք, ըստ Էուլթյան, «նույն ընդհանուր հասկացությունն են արտահայտում՝ յուրաքանչյուրը մասնավորվելով և ստանալով տերմինային որևէ հատկանիշով բնութագրվող տարբերակված հասկացություն» (Ղարսյան 37):

**Ներհամակարգային բազմիմաստությունն** անցանկալի երևույթ է ցանկացած տերմինահամակարգում, քանի որ նույն տերմինը տերմինահամակարգի նույն կամ տարբեր մանրահամակարգերում կարող է գործածվել երկու կամ ավելի նշանակություններով, ինչը պատճառ է դառնում տերմինների սահմանումների խախտման, իմաստային շփոթությունների, ավելորդ կրկնաբանությունների և այլնի: Տերմինը պետք է լինի մեկիմաստ, առանձնանա իր հստակ գործառնությամբ, արտահայտի ճշգրիտ հասկացություն, այսինքն՝ տերմինաստեղծման գործընթացում խիստ նախապայման լինի մասնագիտական բառի և հասկացության լիարժեք համապատասխանությունը (Սկրտչյան 156):

Տևտեսագիտական տերմինահամակարգում ներհամակարգային բազմիմաստության օրինակները շատ են: Դրանք տարբերակել ենք 3 խմբերով՝

**1. Բազմիմաստ տերմիններ,** որոնք երկու կամ ավելի նշանակություններով գործածվում են տերմինահամակարգի միևնույն մանրահամակարգում, այսպես՝

**բիրժա – (տնտեսգ.):** 1. Ֆինանսական և առևտրական խոշոր գործարքներ կատարող հիմնարկ: 2. Հումքային ապրանքների մեծ խմբաքանակներով վաճառքի կազմակերպման վայր,

<sup>1</sup> Սույն և ներքոնշյալ տևտեսագիտական տերմինների բացատրությունը տե՛ս Կիրակոսյան, Գրիգոր և ուրիշներ. *Տևտեսագիտական բացատրական բառարան*. Տևտեսագետ, Երևան, 1999; Զոլին, Փիտեր. *Դրամագործության և դրամամիջոցների բառարան*. Գիտանք, Երևան, 2001; Էլոյան, Սեդա. *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*. Նաիրի, Երևան, 2002; Բայադյան, Աշոտ. *Ֆինանսական բացատրական բառարան*. Ասողիկ, Երևան, 2004; Մարկոսյան, Աշոտ և Տիգրան Դավթյան. *Ամենագործածական տևտեսագիտական տերմինների բացատրական բառարան*. Լիգա Պլյուս, Երևան, 2008; Ջհանգիրյան, Դանիել. *Բանկային տերմինների բացատրական բառարան*. Նոյյան Տապան, Երևան, 2008; Հայրապետյան, Աշոտ. *Օտար բառերի բառարան*. հեղ. հրատ., Երևան, 2011; "Cambridge Dictionary". <https://dictionary.cambridge.org/dictionary/>:

**Նետտո – (առևտր.):** 1. Մաքուր, առանց տարայի (քաշի մասին), գտաքաշ: 2. Զեղչերը հանած (ապրանքի գնի մասին): 3. Բոլոր ծախսերը հանած (եկամտի մասին), **համախառն եկամուտ – (Ֆին.):** 1. Ֆիզիկական կամ իրավաբանական անձի եկամուտն է (մուտքերը) նախքան դրա ստացման հետ կապված ծախսերը հանելը: 2. Բոլոր աղբյուրներից ստացված եկամուտների ընդհանուր գումարը և այլն:

Այսպիսի տերմիններ են նաև՝ **գնողունակություն, ժամկետային ավանդ, միջազգային վարկ, լողացող փոխարժեք, սակագին, սառեցված հաշիվ, ֆլուիթ, ավանդ, կապիտալ, սպրեդ** և այլն:

**2. բազմիմաստ տերմիններ**, որոնք երկու կամ ավելի նշանակություններով գործածվում են տերմինահամակարգի տարբեր մանրահամակարգերում, օրինակ՝

**մարծա** – 1. **(առևտր.):** Ապրանքների առք ու վաճառքի գների տարբերությունը: 2. Արտարժույթի առք ու վաճառքի փոխարժեքների տարբերությունը: **3. (բանկ.):** Ներգրավվող և տրամադրվող վարկերի դրույքների, ապահովման գումարի միջև եղած տարբերությունը,

**մակլեր** – 1. **(բանկ.):** Ֆոնդային, ապրանքային և արժուրային սակարաններում գործարքների կնքման ժամանակ միջնորդ: **2. (Ֆին.):** Ունի իրավաբանական անձի կարգավիճակի իրավունք և մասնագիտանում է բորսային գործառնությունների որոշ տեսակներում,

**կապիտալացում** – 1. **(Ֆին.):** Մասնակիցների կողմից ընկերությունում ներդրված բոլոր դրամական միջոցների գումար: **2. (տնտեսգ.):** Ընկերության բոլոր բաժնետոմսերի պայմանական կապիտալի վերահաշվում՝ բաժնետոմսերի քանակը դրանց շուկայական գնով բազմապատկելու միջոցով կամ ընկերության ակտիվի արժեքի գնահատումը՝ ստացված եկամտի հիման վրա:

Նույնպիսի տերմիններ են՝ **եկամուտ, անուկտետ, սպառում, դիլեր, հարկ, վարկ, ձեռնարկություն** և այլն:

**3. բազմիմաստ տերմիններ**, որոնք գործածվում են թե՛ տվյալ տերմինահամակարգի նույն կամ տարբեր մանրահամակարգերում, թե՛ այլ գիտատերմինահամակարգերում: Այս տեսակը թվով սահմանափակ է: Այսպես՝

**կորպորացիա** – 1. **(տնտեսգ.):** Մասնատիրություն՝ ընդհանուր շահերով համախմբված մարդկանց միավորում: **2. (հոգեբ.):** Սոցիալական խումբ, որի նպատակները պարփակված են իր մեջ, որի գործունեությունն ունի ասոցիալական կամ նույնիսկ համասոցիալական բնույթ: **3. (տնտեսգ.):** Կազմակերպություն, որն օրինական թույլատվություն ունի իրականացնելու որոշակի գործունեություն, օրինակ՝ երկաթուղու կառուցում կամ թերթերի հրատարակություն:

**գրավ–1. (Ֆին.):** Ցանկացած գույք, որի վրա օրենսդրությամբ թույլատրվում է բռնագանձում տարածել: **2. (իրավբ.):** Խափանման միջոց: **3. (տնտեսգ.):** Պարտավորությունների կատարումն ապահովելու հիմնական եղանակներից մեկն է, ներկայացնում է վարկատուի իրավասության համալիրը այն գույքի նկատմամբ, որը պարտապանը կամ որպես այդպիսին ներկայացված անձը առանձնացրել են որպես պարտապանի կողմից իր վրա վերցրած պարտավորությունների կատարման երաշխիք:

**հաշիվ** – 1. **(սպորտ.):** Մրցախաղի արդյունքով ստեղծված հարաբերությունը մրցող կողմերի միջև: **2. (հշվպ.):** Ֆինանսական գործառնության, ինչպես և հաշվապահական հաշվառման հիմք հանդիսացող փաստաթուղթ, ֆինանսական գործարքների փաստաթուղթ: **3. (Ֆին.):** Գնորդի և վաճառողի միջև պայմանագրային հարաբերություն, որի համաձայն՝ վճարումը կատարվելու է հաջորդ ժամանակաշրջանում:

**Տերմինային հոմանիշություն:** Եթե բառերի հոմանիշային խմբի անդամները ոչ բոլոր դեպքերում կարող են միմյանց փոխարինել՝ կախված բառի կիրառման ոլորտից, ապա տերմինային հոմանիշները բացարձակապես նույնիմաստ բառեր են, որոնք արտահայտում են նույն հասկացությունը տվյալ տերմինահամակարգում և

առանց որևէ սահմանափակման կարող են փոխարինել միմյանց մասնագիտական խոսքում (Աղայան 355):

Տերմինային հոմանիշության տևտեսագիտական լեզվամիավորները խմբավորել ենք պատճառահետևանքային հետևյալ գործառույթներով.

1. տերմինի արտահայտության պլանի կատարելագործման ձգտում, օրինակ՝ գանձարանային – **հարկաբյուջետային**, մենավաճառ – **մենաշնորհ**, արժեզրկում – **արժեևվազում**, արժետոմս – **արժեթուղթ**, մասնորդ – **բաժնեմաս**: Այսօր գործածական են ընդգծված տարբերակները (Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու 253-254).

2. հոմանիշ տերմինների մրցակցություն, մինչև որոշակի ժամանակ անց կընտրվի դրանցից որևէ մեկը, օրինակ՝ տարադրամ – արտարժույթ, շահաբաժին – շահութաբաժին, ձեռնարկատեր – ձեռներեց – գործարար, գանձապետ – գանձապահ.

3. փոխառյալ տերմինների և դրանց հայերեն համարժեք տարբերակների զուգահեռ գործածություն, օրինակ՝ ինդեքս – համաթիվ, մոնոպոլիա – մենաշնորհ, կոմերցիոն – առևտրային, միկրոբիզնես – միկրոձեռնարկատիրություն, աուդիտ – հաշվետուագում.

4. արևմտահայերեն-արևելահայերեն բառակազմական տարբերակների առկայություն՝ բաղադրիչների բազմաբնույթ կազմությամբ, օրինակ՝ աշխատազուրկ – գործազուրկ, դրամապահ – գանձապահ, դրամաթուղթ – թղթադրամ, կանխադրամ – կանխավճար, վարձաբնակ – վարձակալ, վաճառագիր – ապրանքագիր (Սաքապետոյան 184-213):

Մասնավորապես առաջին երեք խմբերի համար տերմինային հոմանիշությունը «ժամանակավոր երևույթ է տերմինաբանության զարգացման տվյալ փուլի համար: Նույնանիշներից մեկը, հոմանշային մրցակցության մեջ հաղթելով, դառնում է այդ հասկացության միակ անվանումը, մյուսները կամ դուրս են մնում լեզվից, կամ էլ ձեռք բերելով նոր իմաստ՝ օգտագործվում են իբրև նոր տերմին՝ այլ հասկացության համար» (Սուքիասյան 175):

Տևտեսագիտական գրականության մեջ հանդիպում են տերմինների հականիշային զույգեր, ինչպես՝ **նետտո – բրուտտո, հավելուրդ – պակասուրդ, գնաճ – գնանկում, ապառիկ – կանխիկ, առաջարկ – պահանջարկ, լողացող տոկոսադրույք – հաստատուն տոկոսադրույք, վարկատու – վարկառու** և այլ բառազույգեր:

**Հարանուն տերմիններ:** Մասնագիտական բառապաշարում կան տերմիններ, որոնք կազմությամբ շատ նման, բայց նշանակությամբ տարբեր տերմիններ են (հարանունություն): Օրինակ՝

1. **դեկորտ** – ապրանքի գների գեղջ՝ կապված վաղաժամկետ վճարման կամ ապրանքի ցածրորակության հետ, որը չի համապատասխանում պայմանագրում նախատեսված պայմաններին

**դեպորտ** – հետադարձում՝ ապրանքի կամ արտարժույթի առևտրում գնագոյացման համակարգ.

2. **նուլիֆիկացիա** – խիստ արժեզրկված թղթադրամի չեղյալ հայտարարում պետության կողմից

**նոտիֆիկացիա** – մուրհակապահի կողմից ծանուցում փոխանցագրողին, մուրհակատուին կամ ավալիստներին՝ մուրհակի չհոժարագրման կամ չվճարման մասին.

3. **պակասորդ** – դրամական միջոցների, ապրանքների և այլ արժեքների փաստացի նկատմամբ պակաս չափով լինելու բացահայտումն է

**պակասուրդ** – կազմակերպության պարտավորությունների գերազանցումը նրա ակտիվներին ու եկամուտներին.

4. **ձեռնարկություն** – կազմակերպական միավոր, որն իրեն պատկանող կամ սեփականատիրոջ (հիմնադիր) կողմից հատկացված գույքով իրականացնում է

ձեռնարկատիրական գործունեություն և պատասխանատվություն է կրում ստանձնած պարտավորությունների կատարման համար

**Ձեռնարկատիրություն** – նոր բիզնեսի ձևավորման, թողարկման

և գործարկման գործընթաց է, որը հաճախ ներկայացնում է սուբյեկտի գործարար ունակությունը.

5. **սնանկացում (անվճարունակություն)** – պարտատիրոջ հանդեպ պարտապանի ստանձնած գույքային պարտավորությունների կատարման կասեցումն է դատարանի որոշմամբ

**սնանկություն** – պարտապանի անկարողությունն է կատարելու կամ վճարելու իր պարտավորությունները (պարտքի վերադարձն է) դրամական միջոցների բացակայության պատճառով<sup>1</sup>:

Իմաստաբանական տեսանկյունից նույնպիսի բնորոշում ենք տալիս **ստագնացիա – ստագֆյացիա, տրաստ – տրեստ, սվոփ – սփոթ** տերմիններին:

### Եզրակացություն

Ամփոփելով ուսումնասիրած աշխատանքը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Տնտեսագիտական տերմինահամակարգերում լայն տարածում գտած տերմինային բազմիմաստությունը թուլացնում է տերմինի՝ **մասնագիտական ոլորտում սահմանափակ գործածվելու** հատկանիշը, **մեկ հասկացությանը մեկ նշանակություն** տերմինաբանական սկզբունքը: Լեզվական այս երևույթը կարող է տերմինները ճիշտ ընկալելու դժվարություններ ստեղծել ինչպես տնտեսագիտությամբ հետաքրքրվողների, այնպես էլ տվյալ մասնագիտությունը ուսումնասիրող ուսանողների, գիտնականների, անգամ տնտեսագետների համար: Ուստի անհրաժեշտ է վերանայել տնտեսագիտական բազմիմաստ տերմինները տնտեսագետների և լեզվաբանների փոխհամագործակցությամբ՝ բազմիմաստությունը նվազագույնին հասցնելու նպատակով:

2. Տնտեսագիտական բառապաշարը դրսևորվում է ձևախմաստային տարբեր խմբերով, որոնցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը խիստ կարևոր նշանակություն ունի, քանի որ գիտականորեն հիմնավորված իմաստային դրսևորումները կարող են ոչ միայն սահմանափակել տնտեսագիտական տեքստերի տարընթերցումը, տերմինների իմաստային շփոթությունը, այլև անհրաժեշտության դեպքում նպաստել տերմինների ճիշտ ընտրությանն ու գործածությանը:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան, Էդուարդ. *Արդի հայերենի բացատրական բառարան*. Հայաստան, Երևան, 1976:

2. Բայադյան, Աշոտ. *Ֆինանսական բացատրական բառարան*.

Ասորիկ, Երևան, 2004:

3. Էլոյան, Սեդա. *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*. Նաիրի, Երևան, 2002:

4. Կարապետյան, Ռազմիկ և Արզոյան, Ռազմի. *Ռուս-հայերեն գյուղատնտեսական տերմինների բացատրական համառոտ բառարան*. ՀԳԱ, Երևան, 2002:

5. Կիրակոսյան, Գրիգոր և ուրիշներ. *Տնտեսագիտական բացատրական բառարան*. Տնտեսագետ, Երևան, 1999:

6. ---. *Տնտեսագիտության տեսություն*. Տնտեսագետ, Երևան, 2009:

<sup>1</sup> Տերմիններից մի քանիսը բազմիմաստ են, ներկայացրել ենք դրանց առավել կենսունակ նշանակությունները:

7. Հայրապետյան, Աշոտ. *Օտար բառերի բառարան*, հեղ. հրատ., Երևան, 2011:
8. Ղարսյան, Աննա. *Արդի հայերենի իրավաբանական տերմինները*. հեղ. հրատ., Երևան, 2022:
9. Մարկոսյան Աշոտ և Տիգրան Ղալօյան. *Ամենագործածական տնտեսագիտական տերմինների բացատրական բառարան*. Լիգա Պլյուս, Երևան, 2008:
10. Սկրոչյան, Գոհար. *Ռուս-հայերեն բժշկական տերմինների կազմության եղանակների մասին*. Գիտական Արցախ, հ. 1, N 12, 2022, էջ 156-162, doi: 10.52063/25792652-2022.1.12-156:
11. Ջհանգիրյան, Դանիել. *Բանկային տերմինների բացատրական բառարան*. Նոյյան Տապան, Երևան, 2008:
12. Սաքապետոյան, Ռուբեն. *Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները*. ԵՊՀ հրատ., Երևան, 2004:
13. Սուքիասյան, Աշոտ. *Ժամանակակից հայոց լեզու*. ԵՊՀ հրատ., Երևան, 2008:
14. *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*. Երևան, 9-րդ հրաշալիք, 2006:
15. Զոյին, Փիտեր. *Դրամագործության և դրամամիջոցների բառարան*. Գիտակք, Երևան, 2001:
16. "Cambridge Dictionary". <https://dictionary.cambridge.org/dictionary/>. Accessed: 1999-and today.

#### WORKS CITED

1. Aghayan, E'duard. *Ardi hayereni bacatrakan bar'aran*. Hayastan, Erevan, [Explanatory Dictionary of Modern Armenian. Yerevan] 1976. (in Armenian)
2. Bayadyan, Ashot. *Finansakan bacatrakan bar'aran*. Asoghik, Erevan, [Financial Explanatory Dictionary. Yerevan] 2004. (in Armenian)
3. E'loyan, Seda. *Ardi hayereni norabanut'yunneri bar'aran*. Nairi, Erevan, [Dictionary of Modern Armenian Neologisms. Yerevan] 2002. (in Armenian)
4. Karapetyan, R'azmik ev Arzoyan, R'azmik. *R'us-hayeren gyughatntesakan termineri bacatrakan hamar'ot bar'aran*. HGA, Erevan, [Russian-Armenian Brief Explanatory Dictionary of Agricultural Terms. Yerevan] 2002. (in Armenian)
5. Kirakosyan, Grigor ev urishner. *Tntesagitut'yan tesut'yun*. Tntesaget, Erevan, [Economics Theory. Yerevan] 2009. (in Armenian)
6. Kirakosyan, Grigor ev urishner. *Tntesagitakan bacatrakan bar'aran*. Tntesaget, Erevan, [Economics Explanatory Dictionary, Yerevan] 1999. (in Armenian)
7. Hayrapetyan, Ashot. *O'tar bar'eri bar'aran*, hegh. hrat., Erevan, [Dictionary of Foreign Words, Yerevan] 2011. (in Armenian)
8. Gharslyan, Anna. *Ardi hayereni iravabanakan terminnery*. hegh. hrat., Erevan, [Legal Terms of Modern Armenian. Yerevan] 2022. (in Armenian)
9. Markosyan Ashot ev Tigran Davt'yan. *Amenagorc'ac'akan tntesagitakan termineri bacatrakan bar'aran*. Liga Plyus, Erevan, [An Explanatory Dictionary of the most Used Economic Terms. Yerevan] 2008. (in Armenian)
10. Mkrtchyan, Gohar. *R'us-hayeren bjshkakan termineri kazmut'yan eghanakneri masin*. Gitakan Arcax, [On Some Ways of Formation of Russian-Armenian Medical Terms] no. 1, N 12, 2022, pp. 156-162, doi: 10.52063/25792652-2022.1.12-156. (in Russian)
11. Saqapetoyan, R'uben. *Arevelahayereni ev arevmtahayereni bar'apasharayin ar'and'nahatkut'yunnery*'. EPH hrat., Erevan [Lexical Features of Eastern Armenian and Western Armenian. Yerevan] 2004. (in Armenian)



12. Suqiasyan, Ashot. *Jhamanakakic hayoc lezu*. EPH hrat., Erevan, [*Modern Armenian Language*. Yerevan] 2008. (in Armenian)
13. Jhangiryan, Daniel. *Bankayin terminneri bacatrakan bar'aran*. Noyyan Tapan, Erevan, [*An Explanatory Dictionary of Banking Terms*. Yerevan] 2008. (in Armenian)
14. *Terminabanakan ev ughghagrakan teghekatu*, 9-rd hrashaliq, Erevan, [*Terminological and Spelling Guide*. Yerevan] 2006. (in Armenian)
15. Qolin, P'iter. *Dramagorc'ut'yan ev dramamijocneri bar'aran*. Gitanoq, Erevan, [*Dictionary of Coinage and Currency*. Yerevan] 2001. (in Armenian)
16. "Cambridge Dictionary". <https://dictionary.cambridge.org/dictionary/>. Accessed: 1999-and today, ["Cambridge Dictionary". <https://dictionary.cambridge.org/dictionary/>. Accessed: 1999-and today] (in English)

## SEMANTIC MANIFESTATIONS OF MODERN ARMENIAN ECONOMIC TERMS

**ANNA GHARSLYAN**

*Armenian State University of Economics,  
Chair of Languages, Ph.D. in Philology, lecturer,  
Yerevan, the Republic of Armenia*

The aim of the article is to present the semantic manifestations of the modern Armenian economic terms, knowledge of which is one of the keys to building accurate professional speech.

To achieve this goal, the following tasks were set: to carry out a semantic classification of economic terms, to study the two forms of polysemantic terms (extra-systemic and intra-systemic) to distinguish between paronyms, to clarify cases of terminological synonymy and antonymy.

The subject is topical and needs linguistic study, because frequent use of economic vocabulary, general terms, in particular, has been noticeable in various spheres of society in recent decades.

During the research, we examined about 170 economic terms in Modern Armenian, presented their formal-semantic manifestations, role and influence in professional speech, specified the problems that occur and suggested the possible solutions.

The material of the article is presented by semantic, comparative, analytical and descriptive methods.

The conducted study reveals the fact that there is a large number of polysemic terms in the economic vocabulary of two types: extra-systemic and intra-systemic, which often cause misreading of professional texts and semantic confusion of terms.

The spread of the phenomenon is caused by the wide spread of various professional and non-professional sources of poor quality, in particular, by different definitions of the meanings of terms.

In order to reduce these phenomena, which are an obstacle in terminology, it is necessary to cooperate with relevant specialists when studying the vocabulary of the given discipline.

**Key words:** *semantics, terms, purely economic terms, term polysemy, term synonymy, lexical variants, borrowings, antonymic pairs, paronyms.*

**СЕМАНТИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ЭКОНОМИЧЕСКИХ ТЕРМИНОВ  
СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА****АННА ГАРСЛЯН***преподаватель кафедры языков**Армянского государственного экономического университета,  
кандидат филологических наук,  
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – представить семантические проявления экономической терминсистемы современного армянского языка, знание которых является лучшим залогом построения точной профессиональной речи.

Для достижения этой цели мы поставили перед собой следующие задачи: провести семантическую классификацию экономических терминов, изучить многозначные термины в их двух видах, внесистемных и внутрисистемных, различить термины-паронимы, уточнить случаи терминологической синонимии и антонимии.

Тема актуальна и нуждается в лингвистическом изучении, так как в последние десятилетия в различных сферах общества заметно частое использование экономической лексики, особенно общих терминов. Лингвистическое исследование может способствовать повышению уровня экономического сознания общества.

В статье мы подвергли семантическому анализу около 170 экономических терминов современного армянского языка, представили их формально-семантические проявления, их роль и влияние в профессиональной речи, возникшие проблемы и решения.

Материал статьи представлен с помощью семантического, сравнительного, аналитического и описательного методов.

Проведенное исследование свидетельствует о том, что в экономическом лексиконе большое число составляют многозначные термины, которые часто становятся причиной разночтений в профессиональных текстах и смысловых смещений терминов. Наличие данного явления обусловлено широким распространением некачественных профессиональных и непрофессиональных источников, в частности, различным определением значений терминов. Для сокращения в терминологии этих барьерных явлений необходимо сотрудничать с соответствующими специалистами при изучении лексики данной дисциплины.

**Ключевые слова:** *семантика, слова-термины, экономические термины, полисемия терминов, синонимия терминов, словообразовательные варианты, заимствования, антонимические пары, паронимы.*